ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

24 մարտի 2021 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ /ՔՆՆԱՐԿՈՒՄ/

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներից 6-ը:

Բացակա էր ավագանու անդամ՝ Արամայիս Գալստյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորիկ Մարտիրոսյանը:

Նիստը արձանագրում էր Աննա Մովսիսյանը:

ԼՍԵՑԻՆ- Համայնքի ղեկավարը ներկայացրեց համայնքի ավագանու կողմից ներկայացրած դիմումը:

Միաժամանակ նշեց, որ ավագանու նիստ չի կարող համարվել, քանի որ համայնքի ավագանին դիմումի հետ չի ներկայացրել որոշումների նախագիծ, այդ իսկ պատճառով չկա օրակարգ:

Ավագանու անդամները առաջարկեցին աշխատակազմի քարտուղարին արձանագրել և այն կարող են չհամարել ավագանու նիստ:

Համայնքի ղեկավարը ավագանու անդամներին ասաց, որ ավագանու դիմումի մեջ նշված պահանջների մեծ մասը գրավոր կերպով տրամադրվել է ավագանու անդամներին:

Դիմումի 1-ին հարցը վերաբերվում էր 2019-2020թ. բյուջեի եկամուտների և ծախսերի հավետվությանը:

Գալուստ Մանուկյանը համայնքի ղեկավարին հարցրեց 2019թ. ինչքան գումար է նախատեսվել աղբահանության համար:

Համայնքի ղեկավարնասաց, որ նախատեսված է եղել 4119000 ՀՀ դրամ, ծախսվել է 4000000 ՀՀ դրամ

Սևակ Մանուկյանը աղբահանության գծով աշխատակցից պահանջեց 2019-2020թ. ֆիզիկական և իրավաբանական անձանցից աղբահանության վճարների հավաքագրման վերաբերյալ տեղեկություն

Անահիտ եղիազարյանն ասաց, որ 2019թ. իրավաբանաան անձնացից գանձվել է 214646 ՀՀ դրամ, ֆիզիկական անձնացից՝ 3020960 ՀՀ դրամ, 2020թ. իրավաբանականա անձնացից գանձվել է 276460 ՀՀ դրամ, ֆիզկական անձնացից 1619770 ՀՀ դրամ:

Ավագանու անդամները համայնքի ղեկավարին ասացին, ինչ միջոցներ է ձեռնարկվել համայնքի վարչական տարածքում գտնվող գազալցակայանի կողմից զավթած հողամասի վերաբերյալ

Համայնքի ղեկավարն ասաց, որ ծանուցում է ուղարկվել <<ՎԿ Գրուպ>> ՍՊԸ-ին ապօրինի շինարարություն ունենալու վերաբերյալ, գործն ընթացքի մեջ է:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ սուբվենցիոն ծրարգրերի գումարը գլխավոր հատակագիծ չունենալու պատճառով 5 տոկոսով ավելացել է համայնքի հաշվին:

Ավագանու անդամներն ասացին, որ սա իրենց հրավիրած նիստն է և այլ հարցեր չի քննարկվում:

Գալուստ Մանուկյանը համայնքի ղեկավարին ասաց, որ 2019թ. տարվա սկզբին նախատեսված է եղել /սոցիալ անապահով ընտանիքիներ/ հոդվածին 2800000 ՀՀ դրամ, որի մեջ մտնում է հուղարկավորության ծախսը, տարվա ընթացքում փոփոխություն է կատարվել 4729 հոդվածը դարձնելով 2425000 ՀՀ դրամ,

4726 հովածում եղել է 800000 ՀՀ դրամ: Մինչ օրս 2020թ. դրությամբ 18 հոգու մահված գումար դեռ չի տրամադրվել, քանի որ գումարը չի բավարարել:

Համայնքի ղեկավարը ասաց, որ 2020թ. 4729 հոդվածից ծախսվել է 2.425. 000 ՀՀ դրամ:

Սևակ Մանուկյանը համայնքի ղեկավարին հարցրեց արդյոք կա 2020թ. կայացրած որոշում օգնություն տրամադրելու վերաբերյալ և գումարը չի տրամադրվել հասցեատիրոջը: Համայնքի ղեկավան ասաց, որ ոչ:

Սևակ Մանուկյանը համայնքի ղեկավարին ասաց, որպեսզի իրեն տրամադրվի բանկի քաղվածքները 2020թ. օգնություն տրամադրված անձանց գումարների ստացման վերաբերյալ:

Սևակ Մանուկյանին տրամադրվեց անհրաժեշտ փաստաթղթերը:

Սևակ Մանուկյանը համայնքի ղեկավարին ասաց, որ 2020թ. մահացած 6 անձնաց վերաբերյալ երկու անգամ որոշում է կայացվել և գումար է դուրս գրվել:

Աշխատակազմի քարտուղարը ավագանու անդամներին ասաց,որ հնարավոր է լինի շփոթմունք, սակայն գումարը դուրս է գրվել մեկ անգամ:

Քննարկմանը միացան նաև համայնքի բնակիչներ Մաքսիմ Բարսեղյանը և Գևորգ Բաբայանը, ովքեր ասացին, որ վերջիններից հանգուցյալ ծնողներին համայնքապետարանի կողմից դուրս գրված 25000-ական դրամները չեն տրամադրվել իրենց: Համայնքի ղեկավարը ներկաներին ասաց, որ խնդիրը շուտափույթ լուծում կստանա և մեղավորը կպատժվի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ